

րեւս հասանել այնև գիտութեան, ոչ միայն վասն իւր, այլ մանաւանդ վասն ազգին, զի արծարծեալ սփռեացի ի մեջ ազգիս Հայոց, որպէսզի անենեմեան հասցեն այնև շնորհաց եւ գիտութեան: Վասն որոյ յարածաւ առեալ ի ձեռս իւր զարտափին զիրքն, եւ թեպէս ոչ գիտէր, այլ անյայտալ եւ անձանձիր ընթեռնոյր, եր զի ուրեմ հասանեալ ի վերայ տեսութեան եւ մտաց բանին, եւ եր զի ոչ, բայց նա անեմայն ջանիւ առանց ձանձորանալոյ միշտ ընթեռնոյր»: **Բարսեղ վրդ.** Իր մահուան մօտ, իբր «անդառնալի կտակ մահու» իր աշակերտներուն կը յանձնարարէ միայն կարգալ և անձանձորոյթ կարգալ:

Իր աշակերտներուն մէջ կը յիշուին ներսէս Բեղլու եւ ասոր աշակերտներէն Մելքիսեթ վրդ. Վժանցի, որ Մովսէս Տաթեացի կաթողիկոսին ատեն էջմիածինի մէջ հաստատեց արտաքին գիտութեանց դասը՝ 30 աշակերտներով՝ արեղայ և աշխարհական խառն (Առաւել Գաւրէժեցի, գլ. ԻԹ. և Բարգէն վրդ. Կիւլէսէրեան, ԿԼԿ, էջ 2-3):

Տաթեացիի գաւազանէն՝ Երզնկայի Կայիփոսի վանքին ուսումնարանին ծաղկեցնող Յովհաննէս Համէլէնցիի (* 1497) աշակերտներուն երէց ճիւղին կը պատկանէր Ամրտուլու հիմնադիրը Բարսեղ Գա-